


ԲԱՅՆԵՔԻՆ

Կարիա 10 ֆր.
 5 " "
 Կատար 5
 Տարեկ. 12 ֆր.
 Վեցամ. 6 " "
 Ամերիկա
 2 Տոյ 30 սենդ
 ԿԱՆԽԻԿ



ՊԵՅՄԱՆԻ

Գրու թիւերեւ
 չեն տրուիր

Հասցե
 DIRAN
 PAPA ZIAN
 YILDIZ TABIA
 VARNA
 BULGARIE

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿՍՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՆԵՊՏ. 29 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 224

Զ Ե Կ Ո Յ Ց

Նկատելով որ կը գտնուին այնպիսիներ, որոնք իրենց բարեկամաց անվայել արարքը ձաղկելու համար կեղծանուամբ ստորագրած յօդուածներն «Հայերի» մէջ հրատարակել տալէ ետքը, գիտնալով որ խմբագրութիւնը՝ ըստ իւր աւագ պարտականութեան՝ յօդուածագրին իսկական անունը չպիտի յայտնէ, նոյն իսկ իրենց այդ ձաղկած բարեկամաբան դիմելով կեղծաւորաբար ցաւակցութիւն կը յայտնեն, միանգամայն խմբագրութիւնն յանցաւոր կը դատեն նոյն յօդուածը հրատարակած ըլլալուն համար և մինչև իսկ ծայրայեղ միջոցներու դիմել կատարեն զանոնք հանգեալ խմբագրութեան, բան մը որ իրենց քաղաքական մէկ երաշխիքն է: Ուստի որոշած ենք այսուհետեւ այդ անսակ (ընկերական կեանքի) գրութիւնները իրենց իսկական ստորագրութեամբը հրատարակել. որով, ըստ ապագական արդի օրինաց, պատասխանատուութենէ ազատ կը մնայ խմբագրութիւնը:

Կը ցաւինք որ վստահութիւններ չարաչար գործածելով, ստրպեցին զմեզ տկամայ ասանկ որոշում մը տալու: Մէջքը իրենց վիզը:

Ըւելորդ չէ ըսել թէ մեր այն թղթակիցները՝ որոնք վաղ ժամանակէ ի վեր կը վայելեն մեր բացարձակ վստահութիւնը, ազատ են այս որոշումէն:

ԽՕՍԷ ՀԱՍԿՑՈՂԻՆ ԲԱՐԵԻ

Ինչպէս արտասահմանի բովանդակ մամուլը, Հայերին ալ իր բաժանորդներուն մէկ մասին հետ շատ սիրալիր յարաբերութիւններ չի տածեր: Այս անպատեհութեան առաջին ու վերջին շարժա-

ռիթը, հարկ է ըսել, բաժանորդներուն բաժնեգին վճարելու դժկամակութիւնն է:

Ուր պիտի երթայ իրաց այս դժբախտ վիճակին վախճանը. հայերը — մասնաւորապէս արտասահմանի հայերը — ե՞րբ վերջապէս պիտի սորվին թէ մարդ՝ յարգելու համար բարոյակաւոր լինելու պայմանը՝ պարտաւոր է գոնէ վճարելու գրամը այն թերթին զոր ինք ուզած է կարգադրուել բան հասկնալու ամենակարեւոր պէտքն զսահմանը համար:

Հիմակ արտասահմանի մէջ գլխիկէ ամեն տեղ կարծես բարոյականի կարգ անցած բան մըն է թերթերու գրամը չորթելը, գողութիւններուն ամենէն անձայն, անշուկ, ամենէն անվտանգ ու ամենէն անպատեհաւ ձեւը: Պուկարիա հատարակուող ո՛ր թերթին տէրը, օրինակի համար պիտի կրնայ օրինական միջոցներու դիմել տարեկան բաժնեգին գանձելու համար օտար երկրի մը այնինչ քաղաքը բնակող բաժանորդէ մը որ խզճի ու ստամոքսի կատարեալ հանգստութեամբ կըլած ու մարսած է թէ՛ ինք գրամը. Աւագակ կամ գոյ անունով կուակեն այն մարդը որ անտառներու մէջ կամ փողոցներու անկիւնը, գիշերանց, անցորդներ կը կողոպտէ. Արգարութիւնը երբ ճանկը անցունէ այդ մարդը՝ օրինաւոր պատժի կենթարկէ: Մեր ազնիւ բաժանորդներուն կը թողունք որակել այն անձը որ թերթ մը պահանջած, զայն կարգացած ու յետոյ չէ վճարած, այսինքն բաժնեգիներ իւրացուցած է, կամ աւելի ճիշդը, խմբագրին գրպանէն 10—12 ֆրանք գողցած է: Ո՛ր կողմը դարձնես ասիկա ալ գողութիւն է, և կատարեալ գողութիւն. որովհետեւ յայտնի բան մըն է որ լրագրի մը հրատարակութեան ձեւ-

նարկը կը նմանի ուրիշ ամէն տեսակ ձեռնարկներու . յայտնի բան մըն է որ գրաշարը որ թերթին գործը կը շարէ, թուղթը զոր թղթավաճառը կուտայ, տպարանը որ թերթը կը տպէ, բոսթանն որ թերթը բաժանորդին կը հասցնէ, անուրանայի ու անխուսափելի ծախքեր կը ձեռքդնեն. եթէ օր մը մարդկութիւնը այն երանելի դրութեան հասնի որ խմբագիրը ձրի գրէ, գրաշարը ձրի աշխատի, թուղթը ձրի տրուի, տրպարանը ձրի տպէ, բոսթանն ձրի թերթ բաշխէ, այդ օրը մեր բաժնեգին վճարելու դժկամակող բաժանորդները ազատ են իրենց ընտրած այս մեթոտով թերթ կարգալու: Բայց մինչև այդ երջանիկ օրուան երևումը, հասարակ գողէ մը բընաւ տարբերութիւն չունի այն անձը որ թերթը կը կարգայ ու անոր գինը չի վճարեր:

Գանք Հայեղիին. այս հանգէսը հինգ տարիէ ի վեր է որ անընդհատ կը հրատարակուի. պոնուեցան ճերմակերես անձեր որ չխպնեցան չորթելու մեր դրամը նոյն իսկ Պուլկարիոյ մէջ: Հայեղիին իր հինգ տարուան կեանքովը երաշխիքը տուած եղաւ իր կանոնաւոր հրատարակութեանը. բնաւ չի նմանիր այն թերթերուն որ սուկի պէս կը բուսնին ու կանհետանան. առանց գնոյ յաւելման իր ծաւալը մեծցուց ու գրաւոր աշխօին բարձրանալուն պատճառաւ բաժնեգինն ալ չի բարձրացուց. թէև թուղթի գինը ու տպագրական ծախքերը աւելցան. Բետոյ մեր գրութիւնն է թիւի վրայ բաժնեգին գանձել մեր բաժանորդներէն, տարեկան 50 թիւի փոխարէն 10 ֆրանք, որով մինչ ուրիշ թերթեր այս ինչ կամ այնինչ պատճառներով թերթին հրատարակութիւնը ժամանակ մը դադարեցնելով իրական շահ մը ըրած կըլլան, մենք՝ նոյն իսկ մէկ կամ երկու շաբաթ թերթը ընդհատելով՝ դարձեալ ստիպուած ենք բաժանորդին տալ անհրաժեշտ 50 թիւը:

Արդ, մենք որ մեր պարտականութեան կատարմանը մէջ այսքան անթերի կը ջանանք ըլլալ, ամենայն իրաւամբ կը պահանջենք որ բաժանորդք ալ իրենց վճարման պարտականութիւնը անթերի կատարելու ջանան. վասն զի եթէ նոյն իսկ մեր բաժանորդներուն 100ին 75ը վըճարեն ու 25ը չվճարեն, այս վերջիններուն հասուցած փաստը առաջիններուն ձգած շահը հակակշռելով՝ մենք կը մնանք բացը, մեծ դժուարութիւններու մատնուած:

Խօսք հասկցողին, բարեւ:

ԱՉԳԱՅԻՔ

Վանի մէջ կիրակնօրեայ վարժարան մը բացուեր է ուր շատեր կը դիմեն եղեր ուսման ճաշակը վայելելու. նոյնպէս Այգեատանէն ալ փափագ յայտնուեր և հրամանն ալ առնուեր է կիրակնօրեայ վարժարան մը բանալու իրենց թաղին մէջ:

—Լիւմ Անապատի մէջ որբանոց մը բացուեր է ուր բաւական լաւ կերպով կը խնամուին որբերը, որովհետև Լիւմ Անապատը հիմա բաւական լաւ վիճակ մը ունի եղեր:

—Կայս. իրատէ մը կ'արտօնէ վերաշինութիւնը Էնկիւրիի Հայ եկեղեցիին, որ վերջերս պատահած հրդեհէ մը կիսովին այրած էր:

—Սղերդի մէջ ալ 10—20 հոգինոց որբանոց մը հաստատուեր է, որուն հասցիները տեղական միջոցներով պիտի կրնան եղեր հայթայթիլ: Պատրիարքարանը միայն որբերուն հագուստը պիտի ճարէ:

—Փարբերդի ազգային աղջկանց վարժարանէն այս տարի 7 ընթացաւարտելած են, որոնցմէ երեքը արդէն վարժուհիութեան պատրաստուեր են:

—Գատը դիւղի մէջ մէկ քանի հարուստ հայ տիկիններ նուիրահաւաքութեան ելեր են սալոն մը շինելու համար տեղւոյն Աղքատախնամին վերջերս իր իսկ ծախքովը հիմնած նոր վաճառատանը վրայ: Այս սալոնը պիտի ծառայէ հարսնիքներու ընդունելութեանց, որով եկեղեցիին ալ հասցի թի միջոց մը պիտի առաջ պայ:

—Բազմապէս հօկտ. ամսոյ պրակէն կը տեղեկանանք թէ, ցաւդ վենետիկի Միաբանութեան կողմէ ի նպաստ հայ որբիկներուն մեր Պատրիարքարանին յանձնուած է 3000 ֆր. Կիպրոսի որբանոցին 300 ֆր. և Բեքանաթի որբանոցին 200 ֆր.:

Նոյն Միաբանութիւնը կը փափաղի իմանալ թէ արտասահմանի ո՞ր որբանոցները ամենէն աւելի բարեբարաց նպաստներէ զուրկ են: Ուսուցիչ Փր. Կոնիբերի 5 անգլ. ոսկի նուիրեր է ի նպաստ հայ որբիկներու:

—Պազուի դրամատէրներէն Գ. Տէր Մաքգարեան, Չանտէղուրի Նորաշէնիկ գիւղին մէջ

20.000 ռուսկի արժողութեամբ վարժարան մը կանգնել կուտայ . միևնույն բարերարը այդ զըզրոցին տարեկան ծախսոց համար որոշած է նոյնպէս ամէն տարի 1200 ռուսկի տար:

ՄԱՀ

ԴԵՐԱՍԱՆԱՊԵՏ ԹՈՒՄԱՍ ՓԼՍՈՒԼԵԱՃԵՆԻ

Սեպտ. 3ին Աղեքսանդրիոյ Դերմանական հիւանդանոցին մէջ կնքած է իր մահկանացուն համբաւոր դերասան Թ. Փասուլեան:

Իր դերասանական շրջանը կը սկսի 1861 Պոլսոյ Արեւելեան թատրոնէն . ի ճնէ արհեստաւէր ըլլալով, Արեւելեան թատեր յառաջագոյն ծաղիկներէն մին ըլլալու յաջողեցաւ . Թ. Փասուլեանն Ռուսիոյ մէջ քաղաքները շրջապայած ու բաւական համբաւ ստացած է . իր առաջադիւն նախնական տարիները դրամ չահած է . բայց տնտեսագիտութեամբ չէ գործածած . իր երեք զաւկները ծաղիկ հասակնուն մէջ գերեզման դրնելէ ետք, Թ. Փասուլեանն իր վշտէն շուարած սկսաւ դէպի անկում գլխել:

Բաւական յաջողակ աշակերտներ ունի այսօր թատերական ասպարիզին մէջ . Թ. Փասուլեանն որ 62 տարեկան էր, միշտ նոյն երիտասարդական խանդով կը սարքէր ներկայացումները: Հայ ժողովուրդը աւելն առնէ քաջախիտ ու աւոր ցարդը ճանչցած էր, միայն ցաւալի է ըսել որ Թ. Փասուլեանն իրեն եղած այնչափ յարգանաց արժանիքը չէր գիտնար . տարօրինակ կեանք մը անցուցած ըլլալով, կրնայ ըսուիլ թէ իր վերջերս ունեցած արդահատելի վիճակը անոր կը պարտի:

Պաշկարիւյ . Ֆրանսայի և Եգիպտոսի ազգայինք այս վերջին տարիներս ալ իրենց օժանդակութիւնը չի զլացան ու պէտք եղած դարմաններն ըրին . բայց ի դուր, որովհետեւ դերասանականութիւն հիւանդութիւնը որ թոքախտ էր, անդարմանելի էր:

Թ. Փասուլեանն կը թողու այրի մը . տիկին Պայծառ Փասուլեանն, որ ժամանակաւ իրեն հետ թատերաբեմին վրայ խիտ փայլուն վիճակ մը անցուցած էր, և որ աւագ, այժմ յիտին չբաւորութեան մէջ է ի վառնա:

Հետեւեալ գրքերը կը ծախուին Ա. Զարպհանէլեան գրատունը.

Իրագիտութիւն համառօտ	80 սնդ
" " ընդարձակ	1, 50 ֆր
Բնագիտութիւն տարրական	1, 20 ֆր
" " միջին	1, 30 ֆր
" " "	1, 30 ֆր

ՃԵՌԱԳԻՐ

Ստանա Բոժոժիկ եւ Ընկ.

Պ. Բաղար

Միւսիւ թիւֆենկճայրեանը հոս հասաւ: Քէօշէպուճախ կապելայից մէջ կըսուի թէ Գրիգոր տարւասի հոգիբարձութեան հետ բանակցութեան պիտի մտնէ, վարժարանը ներկայ անկեալ վիճակէն . . . Եյրէթի առնելով ի հիմանց . . . փլցունելու համար:

Տոպրիչ

Վարժարանիս դաստիարակ ուսուցիչը՝ հոտը ցրուումը հովիւի մը պէս ասդին անդին ինկած, ի դուր կաշխատի աշակերտները ժողուելու . չարածինները օտար վարժարաններէ ասդին քալ շեն ուզեր, շնորհիւ Տոպրիչի ազգայնաց մէջ տիրած երկպառակութեան, որ կերակրէ թէ դիւրաւ վերջանալիք բան չէ:

Բոժ. — Այս հաշուով, Տոպրիչի ազգային գործերը կարգաւորեալ հոշակալ տեղական թերթի մը մէկ բանի «ան կեղծ» տողերը՝ գրողին մայրխիւղեան եղած կըլլան:

Քամալթըա

Լէւոնէրեան նոր մէթոտ մը հրապարակ ելաւ. պատրաստ սիկարտները մէջանդէն կիսելով կը հրամցուին հիւրերու: Խանութին շաղկաւ պատուով մէկ երկու ծխափաճուր որոշեցին բողբեղ Լէւոնէրեան այս անիրաւ իզոնուրին դէմ:

ԱԶԴ

Եթէ կ'ուզէք ձեր սակեղէն, արծաթեղէն և պողպատեայ ամեն տեսակ իրեղէնները ոսկեղծել կամ արծաթապատել, գիմեցէք Մուսալլա համամ փողոց 4 Ռուբէն Կաղանճեանի նոր բացած խանութը: Գին դիւրամատչելի:

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԵՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Արեւիսիւսիւս ֆգրալար վէ Հիքեայէլէր. Մալիւմաթը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի Էյլէճէլէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշը օլունան մէղքիւր քիթապըն պէրինճի ճիւտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սաթըլմագաա տըր. Ֆիյ 2 ֆրանք.



Հին ԲԱՀԱՆԱՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Հին ատեններու մէջ գոյութիւն ունեցեր են անանկ քահանաներ, որոնք ուղիղ համեմատութեան մը մէջ գտնուելով իրենց ժամանակակիցներու հետ, ծերունիներու պատմութեան նախելով, պայծառօրէն կ'անդրադարձնէին իրենց վրայ, իբր հայելիի մէջ, բազմամասն նկարագիրներէ ձեւացած ժողովրդային պարզամիտ զանգուածին հոգեխօսութիւնը:

Պատմութիւնները, զորս մէջ պիտի բերենք, դար մը կամ կէս դար առաջ տեղի ունեցած ստոյգ իրողութիւններ են, և յաճախակի կը զբոսցունեն, Բաճկալի ժամանցի մը համար լի, ընտանեկան համախմբութիւններու մէջ:

Տ. Ղուկաս քահանան օր մը այգին կերթայ զուարճանալու. վերադարձին, արդէն բաւական խնկարկած ըլլալով Բագոսի, ճամբան կը ձգէ կօշիկին մէկը, ու քսան վայրկեան յառաջանալէ վերջ՝ քաղաքէն դէպի այգի գացողներուն կը հարցնէ.

— Կօշիկս ձգեր եմ, տեսա՞ք ? ?

Տէր Գալուստ, պահք օրերու մէջ քառասուն տէրադրութեան միանուագ արտասանելու պատճառաւ ձանձրութէն զերծ մնալու համար՝ օրին մէկը, հաւատարիմ մնալով Յօնայայցի պատուէրին՝ «Խ. տէր ողորմես» կըսէ ու կ'ազատ:

Տէր Մինաս քահանան եկեղեցիին անհրաժեշտ մօմի պէտք ունենալը ցոյց տալու և այս մասին ժողովրդային անտարբերութեան դարձան մը տանելու համար, սոսկէս ծանուցում մը կընէ.

— Օրհնեալ ժողովուրդ, զաղանձրեցէ՛ն մարի չիպտի բերենք ու չիպտի վառենք հա՛. . . մոմ գնելու էք, մոմ:

Քանի մը տէրաւորներու ընկերակցութեամբ կատարուած գինարբուքի մը միջոցին, կը կոտորի կուրծքը այն շուրթակին՝ զոր կ'ածէր անոնցմէ մէկը, ու նուազը կ'սկսի աղեկաւ ձայներ հանել. նուազածու տէր պապան չի կորսնցուներ իր

պաղարիւնութիւնը, և յաջորդ կիրակին ծանուցումի կը կանգնի ըսելով.

— Օրհնեալ ժողովուրդ, խեղճ քրիստոնեայի մը կուրծքին տախտակը կոտորէ ու ճըւըն ճըւըն ճըւայ կոր. առաջ համար թապալս պիտի պտտցուի ձեր մէջ, առատ առատ սղորմութիւն շնորհեցէք:

Պնակը կը շրջագոյի, ու գոյացած դրամով ոչ միայն ճըւացող շուրթակին կուրծքը կը նորոգուի, այլ մաս մըն ալ կ'աւելնայ երկրորդ խնջոյքի մը համար:

Քահանայի մը ձեռնադրութեան պահուն, երբ կը հասնի այն տեղը՝ ուր եպիսկոպոսը կը հարցնէ ժողովուրդին.

— Ունի՞ արժանաւորութիւն ընծայացուն.

— Արժանի չէ՛, կը պոռայ կին մը յանկարծ ու ձեռնադրութեան արարողութիւնը կը դադրի. Յետոյ պատճառը կը հարցուի կնոջ.

— Վասն զի, կըսէ, օր մը տեսայ որ շուկայէն ամանով մածուն գնած էր, զոր տուն տարած առտն կը մատնոտէր անհամբերութեամբ:

Սիսէն մարդ իրաւունք կուտայ կնոջ, անժուժկալութիւն մը նկատելով ընծայացունէն ընթացքը:

Տէր Զաւէն՝ Նարեկի գլուխներէն մեծագոյն մասին դէմ նշանակած էր ախտերու նշաններ, և երբ հիւանդ մը ներկայանար իրեն կարգացուելու՝ անոր հիւանդութիւնը տեղեկանալէ ետքը, կը կարգար այն աղօթքը զոր դրած էր այդ հիւանդութեան դէմ: Օր մը, ախտաժէտի մը եւ այս քահանային միջև սա խօսակցութիւնը կը դառնայ.

— Տէր հայր, պիտի կարգացուիմ:

— Ինչ է հիւանդութիւնդ.

— Օրոտացում:

Աւ մեր տէր հայրը իր ցանկին մէջ մտցած ըլլալով նշանակելու այս ախտը՝ կը յարէ.

— Օրհնեալ, այդ հիւանդութեան աղօթք չի կայ, գնա՛ բանդ:

Եւ սրովհետեւ Տէր Զաւէն աղօթքներուն արժեքն ալ սրտած էր՝ ատունց երկար կամ կարճ ըլլալուն համեմատութեամբ, օր մը կը հարցնէ միամիտ կնոջ մը՝ որ կարգացուելու եկած էր, ընդմիջելով արդէն իսկ սկսած աղօթքը.

— Օրհնեալ, քանի՞ փարա պիտի տաս, ըսէ որ անոր կեօրէ կարգամ:

Գ.

ՎԱՅԻՄԱՌԻ ՀԱՅԻԻ

Տեսարանը կը ներկայացնէ ծխալաճառի նեղ խանութ մը, որուն մէկ անկիւնը դրուած աւանդներով լեցուն գաւառին առջև ամիրայի մը պէս բազմած է ընթերցողաց վաղածանօթ Ան-ժոտենց Մալիւմ աղան:

Ժամը ինն է:

Դեռատի և գեղազեմ բարձրահասակ կին մը խանութին առջև կերևայ ու շրջուն ձևովաճառի մը կը հարցնէ թէ «Մալիւմ» աղային խանութը ո՞ր է ու:

Մալիւմ աղայն՝ որ արգէն գեղանի կինը հեռուէն տեսնելով ոտքը ձեռքը գոլ ելած գէպի գուռը ուղղուած էր, ձկավաճառին պատասխանելու ժամանակ չի ձգելով. — Հոս մնցէք պայ-վական հանում, ձեր բնուած Մալիւմ աղայիս մաղաղան (Տ) ֆէօս է ու: կըսէ:

— Հրամանքնիդ Փիտենց Մարիամ հանումը կը ճանչնա՞ք. իսկ ան զրկեց. Եալնըջ տեղ եկած չըլլամ:

— Խայր, էֆէնտըմ. եալնըջ չեկիք. ծառայական մարիամ հանումն ալ կու ճանչնամ, մայմու հանումն ալ:

— Մարմուտ հանումը ո՞վ է քի:

— Էֆէնտըմ, կարճ խօրըթինք. պա տէֆթէր ու պիլանչօ՝ առ քաշաքը միւթէմէքքիւն թախըմ մի հայ քրիստոնէ տիւտիւ հանումներու հետ մուամէլաթը սարաֆիյէով մէջլուէլ ցած եինք: Զաննըս րամմանքնիդ ալ առ միւճիպով ֆէօս միւրաճաթ արիք. պինտէն ալէյ, ներս հրամ-մեցէք նոտեցէք ուր՝ իճապը իճրան նայինք:

Այս հրաւերին վրայ Դիկինը խանութ կը մտնէ, ու թէև գրանը մօտ գրուած աթոռակին վրայ կ'ուզէ նստիլ, բայց Մալիւմ աղան՝ — Խայիր, ճիկէրիս քէօշէն, սանկս քովս հրամմէ ուր՝ խօսքերնիս մինակ մինք իմանանք ու ըսելով կը ստիպէ քովը նստիլ:

— Խանութին մէջ ուրիշ մարդ չի կայ. խօսքերնիս ո՞վ պիտի իմանայ:

— Վախիտէ ընպէս է ըմմա՝ չուլհա մէքիւկիի պէս սօխախէն էկող գնացող կաթնալեր թալի. գաներու բաթուտիէն իրար չինք հասկնար:

Տիկինը աթոռը առած գրասեղանին մօտ կը նստի:

— Եֆէնտէն անուշով կու խումիք:

— Վոյ շնորհակալ եմ, առանկ զահմէթներ մընէք. խահվէ չեմ ուզեր:

— Զահմէթն ի՞նչ ճիկերու է էֆէնտըմ. յոգ-նած դադրած ֆէօս գալէգ ոտերս մեր մէկ խէյ-

ֆէնալ չի տի խմիք. (քովի պատուհանին զարնե-լով.) Յակոբ աղբար, ըսէ՛նա Գէօրգիին ուր՝ քէյֆ-լի խէյֆէ մի բերէ:

— Մարիամ հանումին խօսքը շիտակ է եղեր, ամեն երթալուս իգրամ կընէ, խահուէ կը խըմ-ցունէ զիս ամօթով կը ձգէ ըսա:

— Ատի՛ ինսանիյէթի զայտէէն է. մատէմ քի Մարիամ հանումին թալիյէովը ֆէօս էկիք, պէկտէն կէէն պէկ տիք. ոա ալ գիննալու է ուր՝ մարդուն կէօրէ է. ըմմէն միւրաճաթ ընողին չէք աներ առ իգրամնալ թէվազուն. ճան ճիկէր խուզու սարմասիներուն հըմար է: Տալտաղայով ալ մուցանք հարցնել, սիկարա կու խումիք:

— Խայիր, սովորութիւն չունիմ:

— Կու խումիք խէ մի՛ քաշուք հանումըս. Աստուածպետականութեանը տուածէն թիւթիւն ալ շատ ունինք, թուլթ ալ:

— Ոչ, չեմ գործածեր:

— Բարի: Պինտ էաջ ձեր պայլական անիւնը մեզի պաղըլլամիշ կանի՞ք մի:

— Բերուլէ:

— Բէլուլէ մի՛... տահա լայուխու կըլլար Բուռլանթի ըլլաք իսէ: Ինչ է նէ հմայեկս հը-րամմեցէք, խօսեցէք:

— Գուզում Մալիւմ աղա, տէնիզէ տիւշէն եը-լանա սարըլըր կըսեն. գէտէք ա, ժամանակները հիմա նեղ ըլլալուն, Մարիամ հանումին ըսի քի ինծի ամսուան մը համար 200 զըջ գտնայ ֆայիլով. ան ալ հրամանքիդ համար ըսա:

— Աղէկ ըմմա, մենք ֆայիլով փարա չինք տար. մեր առածը նիզամի տայրէօին պուզտիկ գոմիսիօն մի է:

— Ինչ է նէ իշթէ:

— Զեր աղան նէճի՞ է:

— Աղաս... ճի է, հոս գործերը քէսատ ըլ-լալուն՝ Բլէֆլա գնաց գործ փնտռելու:

— Մօտերս չի տի գայ եա՛:

— Խայիր, պէլքի կաղնդին կուգայ:

— Բարի. Տանդ մէջ ուրիշ ո՞վ ունիս:

— Տանտէր մ'ունիմ. Էրիկ կնիկ են, իրեք չօ-ճուխով:

— Ատ տանտէրդ նէճի՞ է:

— Զուռը կիւնտէլիկով պաղ փորել կերթայ, ամառն ալ խկէլէն ցորեն կրող է:

— Ըմմէն օր գործի կերթա՞յ:

— Պէլի, առտուն կանուխ կերթայ:

— Յորեկ ատեն հիշ տուն կուգա՞յ:

— Ըրաթ եկած չեմ:

— Էյ տա 200 զըռչին խարշըլըլու ինչ րէ-հին տի տաս:

— Պարոնտատէս ֆնացած աճէմ իշի աղբոր սէտճատէ խալիսի մը ունիմ, անթիգա է. տես-նողները բէք հաւնած են. խօսքերնիս ընենք լիմցունենք տէ՛ ան ատեն հոս կը բերենք:

—Հմայելիս մութավէլէնիս սրբային դնինք տէ՛ պատէհու ադ խուսուսը միւզաքէրէ կանինք.

—Շատ աղէկ:

—Մասէմ քի Մարիամ հանումին թափսյէյովը միւրաճաթ աբիք, ձեզի հարուր սէք-սէն զրշ. տի տանք, դուք ալ մեզի 200 զրուշի սէնէտ մի տի տաք մէկ ամիս վատէլի:

—Վալ ճանըմ հաճի աղա, քսան զրուշ ֆա-իզը շատ չէ՞ մի եա:

—Փայիզ մի՛ ըսեր. մենք ֆայիզով բաժա չինք տար. գօմէսիօն ըսէ:

—Աֆ կընես, ես դրաբառճա չիյտեմ տէ ֆաիզ կըսեմ:

—Կեցիր ուր ըսիմ. առ 20 զրուշին 5ը բուլ բարասի տըլի. 5ը խայտիյէ, 5ը միւթէֆէրիգա մասարիֆ, 5ն ալ գօմէսիօն. ֆայիզ մայիզ չկայ:

—Ես չիյտէի քի էրկու հարուր զրուշի հա-մար բէշին առ խտար մասրաֆ կըլլայ:

—Պէ աշվիդ պլպլուքը սիրածս, առ մէսա-րէֆը հիմա չի տի ընենք. վատէի խիթամին բարան թահիլ չանինք նը՝ ան առեն ընելիք-ներհուս հիսապին մահուս պ տըլի:

—Զիյտեմ ամա, կարճ խելքովս սա կը հասկնամ կոր քի, բարուր զրուշին ամիսը տասը զրշ ֆաիզ ըսել է:

—Փաիզ մրսեր կըսիմ քեզի, գօմէսիօն ըսէ, մենք առ բարան խաթեր համար տի տանք, ֆա-իզճի չինք:

—Օղ ըլլաս ամա, կուզես ֆաիզ ըսէ կու-զես քովիսիմոն, կօգտէ քի ինձմէ պիտի ելլայ ադ բարան:

—Մեղմէ ինչո՞ւ տի ելլա՛ հանումս, առնե-լիք բարայէդ, եանի մեր տալիքէն տի ելլայ:

—Աֆ կընես, առ կտորը բէք աճէլէ ըսիր տէ չհասկցայ:

—Քէրէմ արէ բուռլանթի հանում, կեցիր ուր ըսիմ, նիզամին մութապըխ բերելու համար է թէքլիֆնիս, առ գօմէսիօնը ձեզնէ չելլար. քի-մինին բարասը քիմինին տուվասը կըսին. մեր ինտո՞ր մարդ ըլլալը Մարիամ հանումէն կու հաս-կնաս:

Հապպէի վահիտէ գօմէսիօն չառնինք նը ինչ կըլլի. Հըմայելիս սէնէտը առ խայտէով իմպա տի անիք. վաղը սաաթը էրկուսին ձերտէվլէթ-խանէն կուզանք, խային կու. փռինք, կու տեսնենք, հարուր սէքսէն զրուշը կուտանք ու դործերնիդ. կու լմնցունինք. Ադ ագչէ գարա կիւն իչիւն տիր կըսէ թէմսիլը. առ գօմէսիօնը թող զուրպանդ ըլլի. տօթիդ տուշմանիդ էռաջըր գործդ կու լմնցնէ եա. քառսուն տարին հեղ մի քանի մը զրուշդ տի երթայ եզեր. ճիվերդ ի վար. ֆօքիդ օղ ըլլայ:

Յաջորդ. օրը Մալիւմ աղան՝ հաղուած սըգ-

ուած ու ածիլուած, մէկ ձեռքը սաթէ համրիչ, միւսը արծաթ գլխով գաւազան, զրպան ալ 20 բարայի էյլէնէ խապախի կուտ լեցուցած, վերոյիշեալ տիկնոջ բնակարանը կ'ուղղուէր, աղ-քատութիւնը շահագործող ճիւղի մը զգոյցած սրտի անխառն գոհունակութեամբ:

ՋԱԻԹԱԿ

ՀԱՃԻ ԲԱՆԱԳՕ

(222 ինձի Գիւսիսէսէն)

Սաաթ տօգուզ սուլարընտա Արթին՝ Մայնօ-սուն էվէնէ կիտիպ մերգումէյի ալտը վէ սօգա-ղա չըզալար. Սօգազլար էհալի իլէտօլմուշ օլ-տուզումտան, թէնհա մահալլէրտէն կէլմէյի մի-նասիպ կէօրիպ հաճի Բանագօյա վասըլ օլտու-լար վէ տէնիզ պաղչէսինտէ պիր գանաբէ իւլէ-րինտէ օթուրուպ, Արթին շէօլլէ տէտի:

—Մայնօսճուում, սէնինլէ պէօլլէ պիր կէ-ճէ հաճի Բանագօյա կէլմէք իչիւն նէ՝ տէրէճէ իզտիրապլարա քէնտիմի տիւչար իթմիշիմտիր:

—Աման, աման, պու ֆարսի լաֆլարընտա Սթանպօլլուլարա՞ն մը էօյրէնտին պիրէ, պիր ազ գապաճա գօնւշ քի պիր շէյ աղնալըմ:

—Թէ պէ ճանըմ, եանի նէ գատար սըզըն-թըլար շէքտիմ տէմէք իսթէյօրում:

—Հա շէօլլէ սէօլլէ, ամա պրադ շու լաֆ-լարը, թէ շիմտի եանընտալըմ, գօնուշուպ հա-վէսինի ալ ամա ունսթմա քի եէրին գուլաղը վար. տույարլարսա հալիմիզ ֆէնա, վալլա՞ պապամ իքիմիմիզին տէ գաֆասընը բաթլատըր, հաթրընտա՞ մը, բաստըր մալըգտա ալ գալտը իսթէ կէլիյօրլար ըտը:

—Ահ Մայնօսճուում, տիլինի սէվէյիմ, նէ՛ կիւզէլ գօնուշուեօրսուն. աճապա սիւննետա սէ-նի ըէտտ իտէն:

—Կէնէ ֆարսի ֆուրսիյէ պաշլատըն. բէլթ տիտիլին նէ՞ օլուեօր:

—Եանի սէվմէյէն պիր քիչի տահա պուլու-նուր մը տէյօրում:

—Պանա պազ պիրէ, պէօլլէ պօշ լաֆլարը-լա մը վագըթ կէչիթէճէիզ, հանիեա թէաթ-րօլարա կիտէճէք իտիք:

—Էվէթ կիտէլիմ. ֆագաթ պու ագչամ հան-կըսընա կիտէլիմ:

—Նէ՞ պիլէյիմ պէն պիրէ:

—Կէլ սէնի պու ագչամ Ապտիյէ կէօթիւ-րէյիմ, թուզսուզտա օրտա օյնաեօր:

—Հատէ կիտէլիմ տէ թուզլուլու տա թուզ-սուզու տա կէօրէլիմ:

(Տէպամի)

ՔԵՏԻ ԿԵՕԶԻԻ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (31)

ՈՐՆԷ ՏՐ ԲՈՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏՈ

(ՊԱՐԲԻՐ-ՄԱՄՈՒՆԵ)

Վերադառնալով կատարելապես կը ծանշնար այն տեղը ուր պիտի երթային, վասն զի հաւաստաբար այն տունը զոր Սանկ յիշեցուցած էր իրեն, ուրիշ բան չէր եթէ ոչ տեսակ մը ականատ՝ քանդոնի ոստիկանութեան ծանօթ, եւ կը մտածէր թէ ինչու նախ եւ առաջ խուզարկութիւն մը ընել տուած չէր հոն:

Ուտի, փոքր խմբակը դուրս ելլալուն պէս Պուտտի մեհեմանը չըջապատող լաբիւրինթոսէն, հրաւիրեց իր բարեկամը որ բայերը փութացնէ,

Սանկին հպատակներուն ձեռքէն ողջ առողջ ազատած եւ Չուի վրայ բանի մը նոր տեղեկութիւններ ձեռք բերած ըլլալուն ուրախ, եղեռնադատ ատենին նախագահը կրկնել չտուաւ այդ խնդիրը: Այն ժամ ետքը: Հոնանի կամուրջէն դարձեալ անցնելէ յետոյ, երկու մանտարէնները իրենց նպատակակէտն էին հասած:

Մինակ, որովհետեւ ալ հարկ չիկար ծպտուած քննութիւն կատարելու, ինչպէս ըրած էին մինչեւ այն ատեն, այլ ոստիկանական ճշմարիտ խուզարկութիւն մը, Ֆո-Հօմ ճամբան ժողոված էր դէմն ելած բոլոր ոստիկանները, եւ քսան հատի չափ թիւքսներ կրկնեանային իրեն, ինչ որ մեծ գոհունակութիւն կը պատճառէր նախագահին:

Փայտաշէն երկու ընդարձակ սալատուներու դիմացը կը գտնուէին, տղմախառն կամարներով ծածկուած եւ հաստ պատով մը բաժնուած, որուն կատարը տեսակ մը նրբանցք կար ուսկից կարելի էր հսկել շէնքին երկու մասերուն վրայ:

Վերադառնալով իր մարդերէն տասը դրաւ երկու դուռներուն առջեւ, որք միակ միջոցներն էին ելլել մտնելու. հրամայելով որ մինակ իր աւտոնած մարդերուն թոյլ տան անցնիլ, եւ այս կարգադրութիւններն ընելէ յետոյ, դարկաւ մէկ դրան, հրամայելով որ յանուն օրինաց բանան:

Հրամանը շուտով կատարուեցաւ, եւ Մէնկ որ աւելի աղէկ տեսնելու համար նրբանցքն ելած էր, այն ատեն ներկայ գտնուեցաւ յոյժ հետաքրքրաշարժ եւ նախնակ տեսարանի մը, երբ հնազանդելու համար Ֆո-

Հօմին, մինչեւ տանիքը վեր առին թաղեայ մեծ վարագոյրը որ ճշմարիտ շարժուն աւաստաղ մըն էր:

Արեւմտեան գետնի մը վրայ որ ծածկուած էր հաւի փետուրներու թանձր խաւով մը զոր տեղւոյն տէրը դնած էր քանդոնի շուկաներէն ու ճաշարաններէն, ամեն տրաիքէ երկու երեք հարկեր թշուառներ, այլ, կին եւ տղայ, կը բնանային ամենախորունկ քունով: Այն պահուն երբ այդպէս արթնցած էին կէս գիշերին: Աւելորդ է ըսել թէ ինչ անէծքներով ընդունած էին իրենց հանգիստն ընդմիջողները:

Լապտերներուն լոյսը զոր ոստիկանները կը պտըտցունէին սալատան ամեն մասերուն մէջ, զարհուրագին դէմքեր միայն կը ցուցունէին՝ դուրս ցցուած այդ տարօրինակ անկողիններ վրայէն, բայց ոչ որ միտքէն կանցունէր ընդդիմանալ: Խեղճ արարարածները խորազանի հարուածներով վառուելով, ոտքի կելլային ու կը հեռանային մէկիկ մէկիկ:

Աւելորդ է ըսել որ Մէնկ, իր դիտանոցէն կը զննէր զանոնք հետզհետէ:

Յանկարծ Ֆո-Հօմ լսեց անոր մէկ սոսկալի ազդակը: Բնականաբար կարծելով որ անիկա ծանցած էր իրենց փնտուած մարդը, վեր առաւ աչքերը, զայն ձերբակալելու պատրաստ, բայց խոշոր մանտարէնն անհետ եղած էր:

Ջննութեամբն համակուած, այնքան ծուր էր պարապին մէջ որ հաւաստաբար չուր զգար իր անկողնէն լոյս, տանը հինգ ոտք բարձրութենէ վար ինկած էր:

Նախ ահաբեկած, վասն զի չէր գիտէր թէ իր բարեկամը՝ սալատան դուռը թէ ներսը ինկած էր, Ֆո-Հօմ շուտով ապահովուեցաւ: Այն ատեն չկրցաւ բերել մը զսպել:

Սուս—Բօն որ նրբանցքն ելած էր Մէնկին ընկերանալու, մատովը պատին տակ կը ցուցունէր փետուրներու գէղ մը ուսկից ընկղմած նաւու մը կայմերուն պէս դուրս կը ցցուէին խեղճ նախագահին գեղին կոշիկները:

Գլխիվայր իյնալով կակուկ անկողինն մէջ, մարմնին ծանրութեանը պատճառով ամբողջովին թաղուեր էր հոն: Սրունդներուն մոլեգին շարժումները կը յայտնէին թէ գերմարդկային ինչ ձիգեր կընէր դուրս ելլելու համար աւելի ծիծաղաշարժ քան վտանգաւոր այդ գիրքէն:

Ոստիկաններն օգնութեան փութացին եւ ոտքի վերայ հանելէ յետոյ, փողոց տարին զայն:

Ժամանակ էր: Արիւնը այն աստիճան զլուխն ելած կամ իջած էր որ կը խղզուէր:

Սակայն, որովհետեւ վնասուելէ աւելի վախճած էր, շուտով ինքզինքին եկաւ երբ ազատ օղը շնչեց. Մինակ, թոթաւելէ, շփուելէ, փռիները մաքրելէ յետոյ քօ—Հօրին դարձաւ եւ յուսահատ երեւոյթով մը ըսաւ.

—Ա՛յ կօզտէ: Պուտտաին կամքն ինչ որ ուզէ թող ըլլայ: Ես պիտի երթամ պառկիմ. թող կրողին երթայ ջուռն: Չենէ խնդրելիք վերջին ծառայութիւնս է առաջնորդիլ զիս, վասն զի կարողութիւն չա՛նիմ բա՛լիւ:

Եւ բռնելով ընկերոջը բաղուկը, գծրախտ Մէնկ կաղն ի կաղը ուղղուեցաւ դէպի քաղաք, անիծելով խաղարանները, հաւաքեալաւոր տունը, ոստիկանութեան վերատեսուչը, եւ այս ամենուն վրայ ինքզինքն ալ:

Դ.

Աշագակներու որջ մը

Մինչ կայցելէր Քանգոնի արուարձանները, Լէնկի սպանիչները գտնելու յոյսով, բայց միայն անյաջողութիւն եւ ձախողուած գտնելու համար զորս պատմեցինք, մեծարոյ Մէնկ բնաւ միտքէն չէր անցուներ թէ անկից քսան մզոն հեռու, Մարգարիտներու գետին ստորտը, իր բերքինս բարեկամին հետ խօսակցութեան տարկան էր այնպիսի մարդոց որոց տանութիւնը ահաւոր էր և վրիժառութիւնը կրնար սոսկալի ըլլալ: Տեղն ուր կանցնէր այս տեսարանը, անշուշտ ամենէն տխրակուս տեղերէն մէկն էր զոր կարելի ըլլայ երեւակայել:

Վանկ—Մուն էր, Լաւրոնի արշիպեղագոսին փոքր կղզիներէն մէկը, ուսկից այնքան կը վախնային նաւաղները, ոչ միայն անոր համար որ դետաբերին մէջտեղը գտնուելով յարատեւ վտանգ մըն էր նաւարկութեան, ալ եւ մանաւանդ անոր համար որ որջն էր այն յանդուգն ծովահեններուն որոց վրայ չէին համարձակեր յարձակիլ, եւ Չին կառավարութիւնը նախամեծար կը համարէր չհետապնդել զանոնք, վախնալով որ անոնք հեյլան կը միանան օտարներու հետ.

Այս կղզիներէն մէկ քանին կատարեալ սեփականութիւնն էին ծովային այդ հելուզակներուն. պատարեալ ապահովութեամբ կապրէին հոն, չովհեղբքի բնական դժուարութիւններէն ինչպէս նաեւ իրենց ազդած սարսափէն պաշտպանուած. Հոն կերթային հանգչիլ ի-

րենց արշաւներէն յետոյ, պահել իրենց աւարը եւ նոր արշաւանքներ պատրաստել:

Սքանչելապէս կազմակերպուած լրտեսութեան մը շնորհիւ գիտէին թէ որոնք են ճամբայ ելլող շոգենաւերը, գրեթէ ապահով կերպով կը վազէին անոնց ետեւէն որոնց բեռը, նաւաղները պաշտպանողական միջոցները գիտէին:

Այդ վանկ—Մուն կղզին այն տանէր Ջուրի—Եղեգին մէկ բանակիտղն էր գրեթէ և մանաւանդ ժամանակէ մը ի վեր արշաւանքներ կատարուած էին անկից՝ մինչև այն տանն չտեսնուած կրօնով, ուժգնութեամբ ու յանդգնութեամբ:

Ասոր պատճառը սա էր որ ծովահենները վայրի կրօնով տէր մարդու մը կը հնազանդէին, որ կամուարի տտիճանէն շուտով բարձրացած էր ահաւոր պիտի պաշտօնին:

Հարկ է երեք ամիս ետ երթալ պատմելու համար թէ այս երեւոյթ ինչպէս աւաջ եկած էր:

Լէնկ—Թա—Լանկի սպաննութեան յաջորդ օրն է, արեն ելած է. այն տանը Ջուրի—Եղեգին հրամատարըն էր նոյնայն Բէյ—Հօն որ անգլիական երկու Օքլիֆթ Բիլքքրաններու աւարածան հետեանօք պիտի ձերբակալուէր և որուն մարմինը՝ մահուան դատապարտուելէն յետոյ պիտի գնուէր Մէնկի կողմէ:

(Շար.)

Հետեւեալ գիրքերը մեր խմբադրատան մէջ կը ծախուին.

Լուսինեան Իշխան — Փրանսահայ Բաւարան, գին 25 ֆր. ոսկեդրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք.

Թ. Գ. Հինայեան — Տեոական և գործնական Բերականութիւն Պուլկարեւելն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Բնական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ ռդւոյն. 2 ոսկէս ֆր.

Թապլաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ. Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւքեաֆաթը, դօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Դագանճ դօճա եախօտ Էնֆիլյէճի, դօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.